



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ, ՀԱՎԱԿՆՈՐԴԻ, ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՔ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրջյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Կարեն Մեժլումյանի և Մարինե Ֆարմանյանի,

հաշվի առնելով «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.10.2022թ. (ՀՕ-366-Ն) օրենքով կատարված փոփոխությունները,

ելնելով փաստաբանի անդամավճարի, հավակնորդի, փաստաբանի օգնականի մուտքի և այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգը ընդունելու անհրաժեշտությունից,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 11-րդ ենթակետի, Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 12-րդ ենթակետի,

Պալատի խորհուրդը, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց '

1. Հաստատել փաստաբանի անդամավճարի, հավակնորդի, փաստաբանի օգնականի մուտքի և այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի ցանկը՝ համաձայն 2-րդ հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Պալատի խորհրդի 20.02.2018թ. թիվ 4/9-Լ, 18.12.2014թ. թիվ 35/9-Լ, 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշումները և 17.06.2014թ. թիվ 17/12-Լ որոշումները:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

13 հունվարի 2023թ.
թիվ 2/6-Լ
ք. Երևան